

<p>Շնչառական հիվանդությունների Բարլոու հիվանդանոց</p>	<p>Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն</p>		
			<p>Էջ 1 (6-ից)</p>

ՆՊԱՏԱԿԸ

Շնչառական հիվանդությունների Բարլոու հիվանդանոցը («Հիվանդանոց») ոչ-շահութաբեր կազմակերպություն է: Իր առաքելությանն ու արժեքներին հավատարիմ, այն անհրաժեշտ ծառայություններ է մատուցում իր պացիենտներին՝ անկախ նրանց վճարունակությունից: «Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն» խորագիրը կրող այս փաստաթուղթը («Ֆինանսական օժանդակության քաղաքականություն») ուղենիշներ, քաղաքականություն ու ընթացակարգ է սահմանում ցածր եկամուտ ունեցող պացիենտներին ֆինանսական օժանդակության որակավորում տրամադրելու նպատակով, ներառյալ ինչպես բարեգործական խնամքը, այնպես էլ զեղչված սակագներով խնամքը՝ Հիվանդանոցի կողմից պացիենտներին տրամադրվող բժշկական խնամքի ողջ ծավալի համար: Ֆինանսական օժանդակության այս քաղաքականության նպատակն է՝ ապահովել Հոսպիտալի կողմից տրամադրվող բարեգործական խնամքի համապատասխանությունն այդ խնամքը կարգավորող դաշնային ու Կալիֆորնիայի նահանգային բոլոր օրենքներին, ներառյալ Կալիֆորնիայի Առողջության և անվտանգության օրենսգրքի Բաժանմունք 107-ի՝ Մաս 2-ի Գլուխ 2.5-ի Հոդված 1-ը (California HSC Division 107, Part 2, Chapter 2.5, Article 1)՝ սկսած Բաժին 127400-ից, և Հարկային օրենսգրքի Բաժին 501(r)-ը (IRC § 501(r))՝ իր կարգավորիչ ակտերով:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

«**Հնտանեկան եկամուտ**» նշանակում է պացիենտի եկամուտ, հետևյալից ստացվող եկամտի հետ մեկտեղ. (1) 18 և ավագ տարիքի պացիենտների համար. պացիենտի ամուսինը/կինը, ընտանեկան կենակիցն ու խնամքին գտնվող 21 տարեկանից երիտասարդ երեխաները՝ անկախ այն բանից՝ տա՞նն են բնակվում նրանք, թե՞ ոչ; և (2) 18 տարեկանից երիտասարդ պացիենտների համար. պացիենտի ծնողները, խնամակալ ազգականներն ու ծնողի կամ խնամակալ ազգականի 21 տարեկանից երիտասարդ երեխաները:

«**Աղքատության դաշնային շեմ**» նշանակում է աղքատության ուղենիշները, որոնք Միացյալ Նահանգների Առողջապահության և սոցիալական ծառայությունների նախարարությունը պարբերաբար թարմացնում է Դաշնային մատյանում (Federal Register), Միացյալ Նահանգների Օրենսգրքի Գլուխ 42-ի Բաժին 9902-ի ենթաբաժին (2)-ի իրավասության ներքո (42 U.S.C. § 9902(2)):

Շնչառական հիվանդությունների Բարդու հիվանդանոց	Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն	Էջ 2 (10-ից)
--	---	---------------------

«**Ֆինանսապես որակավորված պացիենտ**» նշանակում է պացիենտ, ում Ընտանեկան եկամուտը չի գերազանցում աղքատության դաշնային շեմի 350 տոկոսը, և ով հանդիսանում է. (1) ինքնուրույն վճարող պացիենտ (սահմանված իբրև պացիենտ, ով երրորդ կողմի ծածկույթ չունի որևէ առողջական ապահովագրողից, առողջական խնամքի սպասարկման ծրագրից, Medicare-ից կամ Medicaid-ից, և ում վնասվածքն աշխատողների փոխհատուցման, ավտոմեքենայի ապահովագրության, կամ այլ ապահովագրության նպատակներով փոխհատուցելի վնասվածք չէ, ըստ Հիվանդանոցի որոշման ու փաստաթղթային հիմնավորման), կամ (2) «բարձր բժշկական ծախսերով» պացիենտ (սահմանված իբրև անձ, ով, կամ ում ընտանիքն ունեցել է սեփական գրպանից հիվանդանոցին վճարած տարեկան ծախսեր, և/կամ փաստաթղթերով հիմնավորված ծախսային վճարումներ այլ մատակարարների, որոնք գերազանցում են վերջին 12 ամսում պացիենտի ընտանեկան եկամտի 10%-ը):

«**Սովորաբար տարեկան հիմքով ներկայացվող հաշվի գումար**». ցածր եկամտի բերումով ֆինանսական օժանդակության համար որակավորվող պացիենտին տրամադրված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը սահմանելիս, Հիվանդանոցը նախ կնվազեցնի իր հաշվեգրի գումարը մինչև այնքան, որքան այն կվճարվեր Medicare-ի կողմից, եթե ծառայությունները ծածկույթի տակ լինեին, և այդուհետ հավելյալ զեղչ կտրամադրի դեպք առ դեպք՝ ելնելով պացիենտի հանգամանքներից: Եթե Հիվանդանոցը ծառայություն է տրամադրում, որի համար Medicare-ի կողմից վճար չի սահմանված, ապա այն կնվազեցնի իր հաշվեգրի գումարն այնքան, որքան Հիվանդանոցը կվճարվեր Medi-Cal-ի կամ պետական ֆինանսավորմամբ գործող առողջական արտոնությունների մեկ այլ ծրագրի կողմից, որին հիվանդանոցը մասնակցում է: Եթե հիվանդանոցը ծառայություն է տրամադրում, որի համար պետական ֆինանսավորմամբ գործող առողջական արտոնությունների որևէ այնպիսի ծրագիր չկա, որին Հիվանդանոցը մասնակցում է, ապա Հիվանդանոցն այնպիսի համապատասխան զեղչային վճարում կսահմանի, որը չի գերազանցի այն գումարները, որոնք սովորաբար վճարման են ներկայացվում անհատներին, ովքեր նման խնամքի համար ծածկույթ տրամադրող ապահովագրություն ունեն:

«**Պարտահավաքման արտակարգ գործողություններ**» նշանակում է որևէ անձի դեմ իրականացված հետևյալ գործողությունները՝ Հիվանդանոցի Ֆինանսական օժանդակության քաղաքականության ծածկույթի ներքո տրամադրված խնամքի դիմաց ներկայացված հաշվեգրով վճարում ստանալու կապակցությամբ.

- Անձի պարտքը մեկ այլ կողմի վաճառելը;
- Սպառողական վարկանիշ հաղորդող գործակալություններին կամ վարկային բյուրոներին անձի վերաբերյալ բացասական տեղեկատվություն հաղորդելը;
- Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամքը հետաձգելը կամ մերժելը, կամ պահանջելը, որ վճարում կատարվի նախքան այդ խնամքը տրամադրելը, որովհետև տվյալ անձը մեկ կամ մի քանի հաշվեգրի դեռևս չի վճարել նախկինում իրեն տրամադրված և Հիվանդանոցի Ֆինանսական օժանդակության քաղաքականության ծածկույթի ներքո գտնվող խնամքի համար, բացառությամբ, եթե Հիվանդանոցը կարող է

Շնչառական հիվանդությունների Բարլուու հիվանդանոց	Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն	Էջ 3 (10-ից)
--	---	---------------------

ցույց տալ, որ վճարումը տվյալ անձից պահանջվել է՝ ելնելով այլ գործոններից, քան տվյալ անձի կողմից նախկինում ներկայացված հաշվեգրերը չվճարելը, և առանց վերջինս հաշվի առնելու;

- Գործողություններ, որոնք իրավական կամ դատական գործընթաց են պահանջում, և որոնք այլապես արգելված չեն այս քաղաքականությամբ կամ կիրառելի օրենքով, ներառյալ անձի բանկային հաշվի կամ որևէ այլ անձնական սեփականության օտարումն ու առգրավումը, այդ անձի դեմ քաղաքացիական հայցի ներկայացումը, անձի ձեռքառնումը, կամ նպաստելը, որ այդ անձի նկատմամբ ֆիզիկական ազատության սահմանափակման որևէ հրահանգ արձակվի;
- Այլ գործողություններ, որոնք Հիվանդանոցը չի կարող ձեռնարկել, որոնք սակայն որոշ հանգամանքներում կարող է ձեռնարկել պարտահավաք գործակալությունը, կամ Հիվանդանոցի դուստր ստորաբաժանում կամ մասնաճյուղ չհանդիսացող մեկ այլ փոխանցառու (assignee), ներառյալ անձի սեփականության կալանումը (բացառությամբ այնպիսի կալանքի, որի իրավունքը նահանգային օրենքների ներքո հիվանդանոցն ունի դատարանի որոշման, արտադատարանային կարգավորման կամ փոխհամաձայնության հիմքով հասանելի եկամուտներին հետամուտ լինելու նպատակով, որոնք այն պարտք է որևէ անձի՝ անձնական վնասվածքների հետևանքով, որոնց կապակցությամբ հիվանդանոցը խնամք է տրամադրել), անձի հիպոթեկացված սեփականության տիրացումը (foreclosure), կամ դատարանի որոշմամբ անձի աշխատավարձի առգրավումը (garnishment):

«Վճարման ողջամիտ ծրագիր» նշանակում է ամսական վճարումներ, որոնք չեն գերազանցում պացիենտի ընտանեկան եկամտի 10%-ը՝ կեցության կենսական ծախսերը հանելուց հետո, որոնք ներառում են. բնակվարձը կամ հիպոթեկային վճարն ու տան պահպանման ընթացիկ ծախսերը, սնունդն ու տնային պաշարները, կոմունալ վճարումներն ու հեռախոսը, հագուստը, բժշկական ու ատամնաբուժական վճարումները, ապահովագրությունը, դպրոցական կամ մանկապարտեզային վճարումները, մանկական կամ ամուսնական օժանդակությունը, փոխադրամիջոցային ծախսերն ու ավտոմեքենայի ծախսերը, ներառյալ ապահովագրությունը, վառելիքն ու նորոգումները, մասնավճարները, լվացքն ու մաքրումը, և այլ արտակարգ ծախսեր:

ՀԻՎԱՆՏԱՆՈՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական օժանդակության ծրագիրը ներառում է ինչպես Բարեգործական խնամքը, այնպես էլ Ցածր եկամտի դեպքում տրամադրվող ֆինանսական օժանդակությունը:

Բարեգործական խնամքը տրամադրվում է այն պացիենտներին, ում Ընտանեկան եկամուտը հավասար է Աղքատության դաշնային շեմի՝ տվյալ պահին գործող ուղենիշների երկու հարյուր տոկոսին (200%), կամ ցածր է դրանից, ովքեր տրամադրված ծառայությունների դիմաց Հիվանդանոցի ներկայացված հաշվեգիրը վճարելու համար բավարար ռեսուրս չունեն: Բարեգործական խնամքի իրավունակությունը որոշելիս Հիվանդանոցը կարող է հաշվի առնել

Շնչառական հիվանդությունների Բարդու հիվանդանոց	Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն	Էջ 4 (10-ից)
--	---	---------------------

պացիենտի եկամուտն ու որոշ դրամական ունեցվածք՝ ըստ այս Քաղաքականությամբ սահմանվածի:

Ցածր եկամտի դեպքում տրամադրվող ֆինանսական օժանդակությունը տրամադրվում է Ֆինանսապես ընդունելի այն պացիենտներին, ովքեր Բարեգործական խնամքի որակավորում չեն ստանում: Նման դեպքերում Հիվանդանոցը հաշվեգրով ներկայացվող գումարի չափը փոփոխում է՝ այն համապատասխանեցնելով Հաշվեգրով սովորաբար ներկայացվող գումարի չափին, և Ֆինանսապես ընդունելի պացիենտների հետ Վճարման ողջամիտ ծրագիր է բանակցում: Պացիենտի Ընտանեկան եկամուտը փաստաթղթավորելու նպատակով, Հիվանդանոցը կարող է պահանջել պացիենտից ներկայացնել աշխատավարձի վճարման վերջին կտրոնները, կամ եկամտահարկի հայտարարագրերը:

Վճարման երկարաժամկետ ծրագրերն առաջարկվում են այն պացիենտներին, ովքեր Ցածր եկամտով ֆինանսական օժանդակություն են ստանում՝ թույլ տալու, որպեսզի նրանք ժամանակի ընթացքում զեղչով վճարումներ կատարեն: Վճարման երկարաժամկետ ծրագրերը բանակցվում են Հիվանդանոցի և պացիենտի միջև, ընդ որում հաշվի են առնվում պացիենտի Ընտանեկան եկամուտն ու կեցության կենսական ծախսերը: Վճարման երկարաձգված ծրագրից օգտվող պացիենտից ծրագրի ողջ ընթացքում շահ չի գանձվում: Եթե Վճարման երկարաձգված ծրագրից օգտվող պացիենտը 90 օր շարունակ չի կատարում բոլոր հերթական վճարումները, ապա Հիվանդանոցը կարող է դադարեցնել ծրագիրը, սակայն մինչև այն դադարեցնելը Հիվանդանոցը պետք է ողջամիտ ջանքեր գործադրի հեռախոսով պացիենտի հետ կապվելու համար և գրավոր ծանուցի նրան այն մասին, որ ծրագրի գործունեությունը կկանգնեցվի, եթե այն չվերաբանակցվի:

Բարեգործական խնամքի մասին հաղորդում. Բարեգործական խնամքը ներառում է ողջ գումարը, որը վճարման է ներկայացվել այս քաղաքականության ներքո բարեգործական խնամքի համար որակավորված պացիենտներին տրամադրված ծառայությունների դիմաց: Ի հավելումն, պացիենտները, ովքեր ունեն Medi-Cal-ի որակավորում, սակայն Հիվանդանոցում իրենց կեցության ողջ ժամանակահատվածի համար ծածկույթ չեն ստանում, ունեն նաև բարեգործական խնամքի կարգով գումարի չեղարկման իրավունակություն: Սա ներառում է չձածկված ծառայությունների, մերժված օրերի կամ մերժված կեցության դիմաց գոյացած հաշիվները: Medi-Cal-ի իրավունակություն ունեցող պացիենտի կողմից ներկայացված Բուժման թույլտվության դիմումի (Treatment Authorization Request, TAR) մերժումն ու նրան տրամադրված վճարման չենթակա այլ ծառայությունները ևս չեղարկվում են բարեգործության կարգով:

Բարեգործական խնամքի համար պացիենտի ունեցվածքի որակավորում. Պացիենտի սեփականություն հանդիսացող դրամական միջոցները ևս կարող են հաշվի առնվել՝ որոշելու, արդյո՞ք պացիենտը բավականաչափ ընտանեկան միջոցներ ունի՝ բավարարելու տրամադրված ծառայությունների դիմաց Հիվանդանոցի ներկայացրած հաշվեգրի ողջ գումարը, կամ դրա մի մասը: Բավարար դրամական միջոցներ ունեցող պացիենտին

Շնչառական հիվանդությունների Բարլոու հիվանդանոց	Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն	Էջ 5 (10-ից)
---	---	---------------------

բարեգործական խնամքի իրավունակությունը կարող է մերժվել՝ նույնիսկ եթե նա բավարարում է եկամտի հարցերում որակավորման հիմնական պահանջները: Պացիենտի դրամական միջոցների գնահատման ընթացքում պացիենտի վճարման պարտականությունները որոշելիս հաշվի կառնվեն ինչպես դրամական միջոցների արժեքը, այնպես էլ պարտքերը (մաքուր արժեքը): Միջոցների գնումը չի տարածվի հետևյալ միջոցների վրա.

- Հարկային օրենսգրքի ներքո որակավորված կենսաթոշակային կամ հետաձգված փոխհատուցման ծրագրեր;
- Հետաձգված փոխհատուցման չորակավորված ծրագրեր;
- Առաջին տաս հազար դոլարը (\$10,000), և առաջին տաս հազար դոլարից (\$10,000) անդին պացիենտի դրամական միջոցների հիսուն տոկոսը (50%):

Ծածկույթի ներքո գտնվող մատակարարներ. Հիվանդանոցի համալիրից դուրս գործող որևէ այլ մատակարարի վրա այս Ֆինանսական օժանդակության քաղաքականությունը չի տարածվում:

Շտապօգնության բժիշկներ. Շտապօգնության բժիշկը, ով շտապօգնության խնամք տրամադրող հիվանդանոցում շտապօգնության բժշկական ծառայություններ է մատուցում, օրենքով պարտավոր է ֆինանսապես որակավորված պացիենտին զեղչ տրամադրել:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

- Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականությունը, Քաղաքականության դիմումի ձևն ու Քաղաքականության պարզ լեզվով շարադրված սեղմագիրը զետեղված են Շնչառական հիվանդությունների Բարլոու հիվանդանոցի կայքում [barlowhospital.org]՝ անգլերեն, իսպաներեն ու հայերեն: Ֆինանսական օժանդակության քաղաքականության, Քաղաքականության դիմումի ձևի և Քաղաքականության պարզ լեզվով շարադրված սեղմագրի օրինակները կարելի է հարցմամբ անվճար ձեռք բերել փոստով, ինչպես նաև Հիվանդանոցի Սոցիալական ծառայությունների վարչությունում:
- Ֆինանսական օժանդակության քաղաքականության առկայության մասին ծանուցումը փակցված է Բարլոուի կենտրոնական համալիրի կենտրոնական նախասրահում, BRH@VPH համալիրի այցելուների սպասարահում և BRH@PIH համալիրի բուժակային կայանի մուտքի մոտ՝ միջանցքում: Ծանուցումները փակցված են անգլերեն, իսպաներեն, հայերեն:
- Հիվանդանոց ընդունված բոլոր պացիենտներին տրվում է ընդունելության փաթեթ, որը ներառում է ֆինանսական օժանդակության առկայության մասին ծանուցումն ու տեղեկատվություն այն մասին, թե ինչպես դիմել:

Շնչառական հիվանդությունների Բարդու հիվանդանոց	Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն	Էջ 6 (10-ից)
--	---	---------------------

- Եթե պացիենտը ծածկույթի մասին տեղեկատվություն չի տրամադրում, կամ տեղեկատվություն է խնդրում ֆինանսական օժանդակության մասին, ապա Ֆինանսական ծառայությունների վարչության աշխատակիցները պատրաստ են օգնել պացիենտին ու նրա ընտանիքին՝ Ֆինանսական օժանդակության դիմում լրացնել, ուղղություն և/կամ դիմում լրացնելու հարցում աջակցություն ստանալ, եթե պացիենտը ցանկանում է դիմել Medi-Cal-ի, Կալիֆորնիայի Առողջական արտոնությունների փոխանակման (California Health Benefit Exchange), Կալիֆորնիայի Մանկան ծառայությունների ծրագրի (California Children’s Services Program) ներքո ծածկույթի համար, կամ էլ կարող են պացիենտին հղել հաճախորդների աջակցության տեղական կենտրոն՝ այս ծրագրերից որևէ մեկին դիմելիս օգնություն ստանալու նպատակով:
- Հիվանդանոցի կողմից պացիենտին ներկայացվող առաջին հաշվեգիրն ապահովագրական ծածկույթի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն է ներառում, որը նախկինում չէր տրամադրվել, և ներառում է նաև հայտարարություն այն մասին, որ պացիենտը կարող է ունենալ Medicare-ի, Medi-Cal, Կալիֆորնիայի Առողջական արտոնությունների փոխանակման կամ Կալիֆորնիայի Մանկան ծառայությունների ծրագրի ներքո առաջարկվող ծածկույթի, նահանգային կամ տեղական ֆինանսավորմամբ գործող առողջական խնամքի այլ ծածկույթների, կամ Հիվանդանոցի կողմից ֆինանսական օժանդակության կամ բարեգործական խնամքի իրավունակություն: Մա ներառում է Հիվանդանոցի այն աշխատակցի անունն ու հեռախոսահամարը, ումից պացիենտը կարող է հավելյալ տեղեկատվություն ստանալ Հիվանդանոցի Ֆինանսական օժանդակության ծրագրի վերաբերյալ: Այն նաև բացատրում է, որ պացիենտը կարող է միաժամանակ դիմել և՛ Հիվանդանոցի բարեգործական խնամքի կամ ցածր եկամուտ ունեցող անձանց համար նախատեսված ֆինանսական օժանդակության, և՛ առողջական ծածկույթի մեկ այլ ծրագրի համար: Նաև տրամադրվում են Covered California-ի, Կալիֆորնիայի Առողջապահության և սոցիալական ծառայությունների վարչության, ինչպես նաև առողջական խնամքի ծածկույթ ստանալու հարցում պացիենտին օգտակար իրավական օժանդակության տեղական որևէ առկա ռեսուրսի հեռախոսահամարներն ու համացանցային հասցեները:
- Հիվանդանոցի բոլոր հետագա հաշվեգրերը ներառում են գրավոր ծանուցում, որով հասցեատերը տեղյակ է պահվում ֆինանսական օժանդակության առկայության մասին՝ ընդամին ներառելով Հիվանդանոցի այն աշխատակցի կամ վարչության հեռախոսահամարը, ումից կամ որտեղից տեղեկատվություն կարելի է ստանալ ֆինանսական օժանդակության դիմելու վերաբերյալ: Հայտարարությունները նաև ներառում են այն կայքի հասցեն, որտեղ զետեղված են Ֆինանսական օժանդակության քաղաքականության, Քաղաքականության դիմումի ձևի, և Քաղաքականության՝ պարզ լեզվով շարադրված սեղմագրի օրինակները:

Շնչառական հիվանդությունների Բարդու հիվանդանոց	Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն	Էջ 7 (10-ից)
--	---	---------------------

ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Ֆինանսական օժանդակության քաղաքականությունը հենվում է պացիենտների ու նրանց ընտանիքների համագործակցության վրա՝ ապահովագրական ծածկույթի մասին տեղեկատվության, ինչպես նաև եկամտի և ֆինանսական միջոցների մասին տեղեկատվության ժամանակին ու ճշգրիտ զեկուցման նպատակով: Հիվանդանոցն օգտագործում է ֆինանսական օժանդակության մասին դիմումը՝ տեղեկատվություն հավաքելու այն պացիենտներից, ովքեր ֆինանսական օժանդակության հնարավոր որակավորում կարող են ունենալ: Ֆինանսական օժանդակության դիմումը լրացնելն ու պահանջվող որևէ և ողջ օժանդակ տեղեկատվությունը ներկայացնելը կարող է պարտադիր լինել Ֆինանսական օժանդակության նպատակով իրավունակություն հաստատելու համար: Հիվանդանոցը պացիենտից կարող է պահանջել նրա աշխատավարձի վերջին վճարումների կտրոնները կամ եկամտահարկի հայտարարագրերը՝ պացիենտի ընտանեկան եկամուտը փաստաթղթավորելու նպատակով:

Բարեգործական խնամքի համար որակավորելու նպատակով, Հիվանդանոցը կարող է պահանջել, որ ֆինանսական տեղեկատվությունը վավերացվի երրորդ կողմի ծառայության կողմից, եթե պատճառ կա հավատալու, որ պացիենտն էական դրամական միջոցներ ունի, չնայած ընտանեկան ցածր եկամտին: Հիվանդանոցը կարող է պահանջել, որ պացիենտը կամ պացիենտի ընտանիքը սեփական իրավունքներից հրաժարում կամ տեղեկատվության տրամադրման թույլտվություն տրամադրի՝ լիազորելով Հիվանդանոցին հաշվի մասին տեղեկատվություն ձեռք բերել ֆինանսական կամ առևտրական կառույցներից, կամ այլ դրամական միջոցներ պահող կամ սպասարկող այլ կազմակերպություններից՝ այդ միջոցների արժեքը որոշելու նպատակով: Բարեգործական խնամքի իրավունակությունը որոշելու նպատակով ստացված տեղեկատվությունը պարտահավաքման գործողությունների նպատակով չի օգտագործվի:

Ֆինանսական օժանդակության դիմումը կմերժվի, եթե պացիենտը հրաժարվում է Medi-Cal-ի կամ մեկ այլ առողջական կամ սոցիալական նպաստի իրավունակության դիմում ներկայացնել, կամ եթե պացիենտը չի համագործակցում, կամ ձգձգում է գործընթացը: Սովորաբար, պացիենտին 30 օր է տրվում ֆինանսական օժանդակության դիմում ներկայացնելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթերը պատրաստելու համար, ներառյալ օժանդակ փաստաթղթերի ներկայացումը: Ի հավելումն, Հիվանդանոցին ապահովագրական բոլոր վճարումների փոխանցումը, ներառյալ սեփական պատասխանատվության հարցով արտադատարանային կարգավորումների արդյունքում ծագած վճարումները, պարտադիր է, ըստ Hospital Lien Act-ի (Cal. Civil Code Section 3045.1).

Կարող է նաև հաստատվել կանխավ իրավունակություն (երբ դիմումն անհրաժեշտ չէ) այն պացիենտների համար, ովքեր Medi-Cal-ի ծրագրում են (Medi-Cal-ի ծրագրում ներգրավված պացիենտներից ակնկալվող վարձն այն ծառայությունների համար, որոնք ծածկված չեն, կամ որոնց համար ներկայացված Բուժման թույլտվության դիմումը մերժվել է, նկատի կառնվի

Շնչառական հիվանդությունների Բարդու հիվանդանոց	Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն	Էջ 8 (10-ից)
--	---	---------------------

բարեգործական խնամքի համար), և վախճանված պացիենտների համար, ում թողած ժառանգության մասին որևէ բան հայտնի չէ:

Եթե պացիենտն առողջական ծածկույթի համար դիմում է մեկ այլ ծրագրի, կամ ունի այդ նպատակով ընթացքի մեջ գտնվող դիմում, և միաժամանակ դիմում է հիվանդանոցի բարեգործական խնամքի կամ զեղչով վճարումների ծրագրին, ապա այդ դիմումներից ոչ մեկը չի կանխարգելի պացիենտի իրավունակությունը որևէ այլ ծրագրի:

Ֆինանսական օժանդակության իրավունակության որոշման վերջնական հաստատումն ու այդ մասին ծանուցումը

Ֆինանսական օժանդակության իրավունակությունը պետք է հաստատվի Գլխավոր տնօրենի (Chief Executive Officer, “CEO”), կամ Գլխավոր հաշվապահի (Chief Financial Officer, “CFO”) կողմից, և փաստագրվի Ֆինանսական օժանդակության հաստատման թերթիկով: Բարեգործական հիմունքով որևէ գործի հաստատման կամ մերժման մասին որոշումն ընդունելու պահին, կայացված որոշման մասին պացիենտին կամ պատասխանատու կողմին նամակ պետք է ուղարկվի: Նամակը պետք է լինի գրավոր, և ներառի հետևյալ տեղեկատվությունը.

- Պացիենտի անունը;
- Հաշվի համար(ներ)ը;
- Հաշվի (հաշիվների) ներկա հաշվեկշիռը;
- Բարեգործական հիմունքով արտոնված դոլարային գումարը կամ կեցության օրերի քանակը (ինչը սովորաբար կներառի ողջ գումարը);
- Հաշվին մնացած որևէ հաշվեկշիռ (հաշվի միայն մեկ մասը չեղարկելիս, երբ, օրինակ, պացիենտն իր ապահովագրական պոլիսի ներքո հասել է կյանքի ողջ ընթացքում թույլատրված առավելագույն ծախսաշեմին ու դրանից անդին ծախսեր է ունեցել);
- Բողոքարկման կարգը, եթե ֆինանսական օժանդակության դիմումը մերժվել է:

Նամակը պետք է ստորագրված լինի CEO-ի կամ CFO-ի կողմից:

Կատեղծվի Ֆինանսական օժանդակության հանձնաժողով, որի կազմում կլինեն CEO-ն, Բժշկական գծով տնօրենը, Գործարար զարգացման հարցերով փոխնախագահը: Հանձնաժողովի պարտականությունները կլինեն.

- Չննել ֆինանսական օժանդակության մերժումների բողոքարկումը, ներառյալ հետևյալ փաստաթղթերը.

Շնչառական հիվանդությունների Բարդու հիվանդանոց	Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն	Էջ 9 (10-ից)
--	---	---------------------

- Պացիենտի կամ ֆինանսապես պատասխանատու կողմի բողոքարկման դիմումը, որով խնդրվում է վերագնահատել ֆինանսական օժանդակության մերժումը;
- Օժանդակ փաստաթղթեր, որոնք կարող են վճարունակ չլինելու ապացույց պարունակել, սակայն նախնական քննարկմանը ներկայացրած փաստաթղթերի փաթեթում առկա չեն եղել;
- Առաջարկներ ներկայացնել CEO-ին կամ CFO-ին՝ վերջնական հաստատման:

Այլ

Բարեգործական հիմունքով բուժվող պացիենտներին տրված ծառայությունները գրանցելիս Հիվանդանոցը կհետևի հաշվեգիր կազմելու սովորական ընթացակարգերին:

Հիվանդանոցի կողմից պարտահավաք գործողությունները կդադարեցվեն, երբ պացիենտը բարեգործական խնամքի համար իրավունակ ճանաչվի, և կառկախվեն այն ընթացքում, երբ պացիենտը փորձում է Հիվանդանոցի Ֆինանսական օժանդակության ծրագրի որակավորում ստանալ: Եթե պացիենտն ապահովագրական ծածկույթ չունի, կամ նշում է, որ ունի մեծ բժշկական ծախսեր, ո՛չ Հիվանդանոցը, և ո՛չ էլ պացիենտի որևէ այլ պարտատեր բացասական տեղեկություն չի փոխանցի վարկանիշ հաղորդող որևէ գործակալության, և չվճարման պատճառաբանությամբ քաղաքացիական հայց չի բերի պացիենտի դեմ ավելի վաղ, քան առաջին հաշվեգիրը ներկայացնելուց հետո 150 օրը:

Զվճարման դեպքում Հիվանդանոցը կհետևի իր Ձեռչերի և բարեգործական խնամքի դիմաց հաշվեգրերի ներկայացման ու պարտահավաքման պրակտիկայի քաղաքականությամբ սահմանված կարգին: Նախքան որևէ Արտակարգ պարտահավաք գործողություն սկսելը, Հիվանդանոցը ողջամիտ ջանքեր կձեռնարկի՝ որոշելու, արդյո՞ք տվյալ անձն ունի այս Ֆինանսական օժանդակության ծրագրի իրավունակություն: Ողջամիտ ջանքերը ներառում են անձանց բանավոր ու գրավոր տեղեկացնելը՝ ինչպես նաև դիմել բարեգործական խնամքի և ցածր եկամուտ ունեցող անձանց համար նախատեսված ֆինանսական օժանդակության համար, օժանդակության դիմելու նպատակով անձանց ողջամիտ ժամանակ տալը՝ նախքան որևէ Արտակարգ պարտահավաք գործողություն սկսելը, ներկայացված ֆինանսական օգնության դիմումները ժամանակին գնահատելը, և անավարտ դիմում ներկայացնող անհատներին ծանուցելը՝ ինչպես ավարտուն դիմում ներկայացնել:

Հիվանդանոցը կպահանջի, որ այն պարտահավաք գործակալությունները, ում ծառայություններից ինքն օգտվում է, համապատասխանեն Հիվանդանոցի Ֆինանսական օժանդակության քաղաքականության և Ձեռչերի և բարեգործական խնամքի դիմաց հաշվեգրերի ներկայացման ու պարտահավաքման պրակտիկայի քաղաքականության պահանջներին: Հիվանդանոցը ոչ մի չվճարված հաշիվ չի հաղորդի որևէ պարտահավաք գործակալության, բացառությամբ, եթե այդ գործակալությունը գրավոր կերպով համաձայնել է համապատասխանել Կալիֆորնիայի Առողջապահության և անվտանգության Օրենսգրքի

<p>Շնչառական հիվանդությունների Բարդու հիվանդանոց</p>	<p>Ֆինանսական օժանդակություն – Բարեգործական խնամքի և զեղչերի քաղաքականություն</p>	<p>Էջ 10 (10-ից)</p>
--	---	----------------------

Բաժին § 127400-ին ու դրան հաջորդող բաժինների պահանջներին (California Health & Safety Code § 127400 *et seq.*) and և 26 U.S.C. § 501(r)-ին, ներառյալ 26 C.F.R. § 1.501(r) *et seq.*-ով սահմանված կարգավորիչ ակտերը:

Ֆինանսական օժանդակության հաստատման լրացված ձևը կներկայացվի Ֆինանսական ծառայությունների վարչություն:

Բարեգործական խնամքի գումարը կհաղորդվի առանձին՝ ամսական ֆինանսական հայտարարություններով:

Հաստատված է Հիվանդանոցի Տնօրենների խորհրդի կողմից, 2015 թ. սեպտեմբերի 24-ին: